

ՏԵՂԵԿԱՆՔ
«ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԿԵՐԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
Օրենքում փոփոխություն կատարելու մասին

Հոդված 3. Ցանկում ներառված սահմանամերձ բնակավայրերում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու արտոնությունների կիրառությունը նշանակում է, որ՝

1) այդ բնակավայրերի վարչական սահմաններում գտնվող առևտրի օբյեկտների, առևտրի իրականացման վայրերում վաճառատեղերի միջոցով բնակչությանը մանրածախ վաճառքի (առք ու վաճառքի), ինչպես նաև հանրային սննդի ոլորտում իրականացվող իրականացման գործունեությունից եկամուտներն ազատվում են շրջանառության հարկից, իսկ այդ գործունեությունն իրականացնող և շրջանառության հարկ վճարող համարվող անհատ ձեռնարկատերերն ազատվում են ձեռնարկատիրական գործունեության համար օրենքով նախատեսված շահութահարկից.

2) տնտեսական գործունեության շրջանակներում արտադրության ~~(բացառությամբ — ակցիզային — հարկով — հարկման — ենթակա — ապրանքների արտադրության)~~ կազմակերպման արդյունքում ստացված արտադրանքի՝

ա. իրացումից եկամուտներն ազատվում են շրջանառության հարկից,
բ. օտարման գործարքներն ազատվում են ավելացված արժեքի հարկից,
գ. իրացումից ստացման ենթակա եկամուտներն ազատվում են շահութահարկից.

3) (կեպն ուժը կորցրել է 25.06.19 ՀՕ-75-Ն)

4) կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերն ազատվում են Ցանկում ներառված սահմանամերձ բնակավայրերում իրականացվող գործունեության մասով Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված դեպքերում, որպես հարկային գործակալ, հարկը հաշվարկելու, պահելու և պետական բյուջե փոխանցելու պարտավորությունից, բացառությամբ հարկային գործակալի կողմից վճարվող՝ աշխատանքի վարձատրությանն

ուղղվող միջոցներից և դրանց հավասարեցված եկամուտներից օրենքով սահմանված ընդհանուր կարգով հաշվարկվող եկամտային հարկի և սոցիալական վճարի:

(մասն ուժը կորցրել է 21.12.17 ՀՕ-297-Ն)

(մասն ուժը կորցրել է 21.12.17 ՀՕ-297-Ն)

(մասն ուժը կորցրել է 21.12.17 ՀՕ-297-Ն)

(3-րդ հոդվածը փոփ., լրաց. 24.11.15 ՀՕ-141-Ն, փոփ. 21.12.17 ՀՕ-297-Ն, լրաց. փոփ., խմբ. 21.12.17 ՀՕ-297-Ն, փոփ. 25.06.19 ՀՕ-75-Ն)